



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը հայոց լեզվի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵԴԻՆԱԿ Անահիտ Հարությունյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ

# Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը հայոց լեզվի դասավանդման ընթացքում

## Ներածություն

Ուսումնասիրվող նյութի ծավալը, խտությունը և բովանդակությունը փոփոխական է, որովհետև լեզուն արգացող օրգանիզմ է, և այդ զարգացման հետ փոփոխության է ենթարկում նաև դասավանդվող նյութը, իսկ սերնդափոխության հետ կապված՝ նաև դասավանդման մեթոդները:

Դասավանդման ժամանակակից մեթոդների մեջ մեծ տեղ է հատկացվում աշակերտակենտրոն դասավանդման մեթոդներին ու հնարներին: Աշակերտին ունենալով դասապրոցեսի առանցքում՝ չպետք է չարաշահել նրա ինքնուրույնությունը, և ուսուցչի հաջողությունը աշակերտին աննկատ ուղղորդելու հմտությունը պետք է լինի, դասավանդողի առաջնային և կարևորագույն նպատակը: Ուղղորդելով աշակերտին՝ ուսուցիչը պետք է զարգացնի սովորողի վերլուծական ունակությունները, կապակցված խոսք ստեղծելու և սեփական եզրահանգումներ կատարելու ընդունակությունները:

Քերականության ուսուցումը սերտորեն կապված է տարբեր բնույթի վարժությունների կատարման հետ: Այս դեպքում նույնպես կարելի է աշակերտների միջոցով կատարել խմբային աշխատանքներ, կազմել վարժություններ, կատարել վերլուծություններ, անել եզրահանգումներ:

Ուսուցչի և սովորողի համատեղ փոխկապակցված աշխատանքով կարելի է հասնել բովանդակության յուրացման ցանկալի արդյունքին՝ կիրառելով «սովորել ստորեցնելով» եղանակը: Յուրաքանչյուր թեմայի դասավանդման ընթացքում ուսուցիչը պետք է աչքի առաջ ունենա վերջնարդյունքը, աշակերտիին ևս ներկայացնի այն, և աշխատանքը կազմակերպի այնպես, որ աշակերտը ինքնուրույն հասնի վերջնարդյունքին:

Ինչ խոսք, բոլոր թեմաների ուսուցումը նման եղանակով հնարավոր չէ կազմակերպել. Եթե շփման բարդ է, դասը պետք է լինի ուսուցչակենտրոն: Որպեսզի դասավանդումը աչյունավետ իրականացվի, պետք է ճիշտ մեթոդական գործոններ ու հնարներ կիրառվի: Դեպի նպատակ տանող ճանապարհը պետք է լինի մեթոդը, իսկ նպատակին հասնելու միջոցը՝ կիրառվող հնարները: Անկախ կիրառություն ունեն հնարները, որոնք երբեմն մեխանիկորեն նույնացվում են մեթոդին:

Ուսուցչի փոչձառությունը այն է, որ կարողանա ավանդական և ժամանակակից մեթոդները կիրառելիս օգտվի նաև հնարներից, որոնք երբեմն տեղծվում են իր կամ աշակերտների կողմից: Ցանկացած հնարի կիրառումը արդարացված է, եթե նպաստում է ավելի հեշտ հասնել վերջնարդյունքին: Աշակերտների ներուժը արելի է օգտագործել գծագրական աշխատանքներ կատարելիս՝ T – աձև, M-աձև հասկացությունների քարտեզ, Վենի դիագրամ, որովհետև այս պարագայում աշակերտը սովորում է նույթը՝ ինչ-որ բան կատարելով և որոշակի գործընթացի մասնակցելով:

Ինքնուրույն աշխատանք կատարելով՝ աշակերտը նոր նյութը ավելի լավ է յուրացնում, քանի որ սեփական դատողություններով մասնակցում է գործընթացին, ոչ միայն ապավինում է իր հիշողությանը, այլև դրսևորում է ինքնուրույն քննադատական մտածողություն, ստեղծագործական խոսք: Աշակերտի համար ստեղծվում է հնարավորություն և՛ ինքնուրույն-

անհատական, և՛ խմբային աշխատանքի համար. Նա ձեռք է բերում համագործակցական կարողություններ, ինչպես նաև հաղորդակցական և սոցիալական փոխազդեցության կարողություններ: Նյութի յուրացման ընթացքում նա հնարավորություն է ստանում սովորածը ինքնուրույն կիրառելու, ի մի բերելու, ամփոփելու, ակտիվացնելու և՛ իրեն, և՛ խմբի անդամներին: Այս ամենով ստեղծվում է ինքնակրթության միջավայր և ձևավորվում է ինքնակատարելագործման ձգտում:

Այսպիսով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշակերտը սովորեցելով և բացահայտելով ձեռք բերած գիտելիքը ավելի հեշտ է մտապահում և անհրաժեշտության դեպքում նաև կիրառում՝ աշխատության մեջ ներկայացվել է «Բայ» թեմայի որոշ մասերի ուսուցումը՝ կիրառելով վերոնշյալ հնարները ու մեթոդները:

### **Բայի անդեմ ձևերի ուսուցումը**

**Դասը ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևն է, սրան օժանդակում են արտադասարանակն վերլուծություններն ու վարժությունները և աշակերտի անհատական, ինքնուրույն աշխատանքը:**

**Ս.Վ.Գյուլբուղադյան, Երևան 1987 /Էջ 19/**

Ցանկացած դաս սկսելիս ուսուցիչը պետք է ունենա նպատակ, որն ուղղորդվում է դեպի վերջնարդյունք: Ըստ նպատակի դասերն լինում են նոր նյութի հաղորման, անցած նյութի ամրապնդման, ընդհանրացման, անցածի յուրացման ստուգման, կրկնության կամ խառը դասեր: Քանի որ դասի կառուցվածքը քարացած չէ, հաճախ չնախատեսված երևույթները ստիպում են շեղվել նույնիսկ օրվա պլանից: Փորձված ուսուցիչը միևնույն թեման միշտ անցնում է նույն մեթոդով, բայց փնտրում է տարբերակներ՝ թարմացնելու և հարստացնելու այդ մեթոդը: սա երբեմն թելադրում է աշակերտի ճանաչողական ունակությունների և հոգեբանական գործողությունների մակարդակը: Այս ընթացքում տեղի է ունենում նոր նյութը ըմբռնելու նախապատրաստություն, որին օգնում են ունեցած գիտելիքները, նոր նյութի ըմբռնում, հիշողության մեջ զանազան վարժությունների միջոցով ըմբռնած նյութի ամրակայում, մտապահում և վերարտադրում:

Բայի անդեմ ձևերի մասին խոսելիս նախ անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել **ԱՆԴԵՄ** բառի բառակազմության և իմաստի վրա՝ գուգահեռաբար ներկայացնելով **ԱՆԿԱՆՍ** բառի բացատրությունը: Գրատախտակին գրել ենք տալիս այս բառերով բառակապակցություններ:

Անդեմ մարդ	Անկախ մարդ
Անդեմ նկար	Անկախ հայրենիք
Անդեմ անձ	Անկախ բառեր

Աշակերտները հետևություն են անում, որ եթե ինչ-որ բան գուրկ է դեմքից, մենք չենք ճանաչում նրան (դրան) բայց դա նրան չի գրկում ինքնությունությունից: Այդպես է նաև բայի դեպքում: Ասածը հիմնավորելու համար օգտագործել T – աձև աղյուսակ: T-աձև Այս աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Մա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպական ձևով, և՛ կառուցվածքով:

Այն, ինչպես նախորդ ձևերը, կարող է կիրառվել անհատական կամ խմբով աշխատելիս: T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ ացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխաններ՝ այո- ոչ, կողմ-դեմ, արտահայտող արձագանքների գրառման համար»: («Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ վարժություններ» -2008 էջ 69)

T-աձև աղյուսակով աշակերտներին մղում ենք դեպի ինքնություն աշխատանքի առաջին քայլը: Նախօրոք դասարանը բաժանվում է երկու խմբի. արագ լինելու համար կարելի է նստած տեղերով բաժանել առաջին և երկրորդ խմբի: Խմբերին առաջարկում եք գրել **ԱՆԿԱԽ** բառի համար դրական և բացասական արտահայտություններ: Աշխատանքը ստացվում է շատ արագ և աշխույժ:

Աշակերտները կգրեն շատ տարբեր և անսպասելի արտահայտություններ: Մի խումբը ներկայացնում է դրական կողմերը, իսկ մյուս խումբը՝ բացասական: Ստացվում է մոտավորապես այսպիսի պատկեր:

## ԱՆԿԱԽ

Դրական կողմեր	Բացասական կողմեր
Ինքնություն է	անպատասխանատու
Անկախ է	թափառական
Ազատ է և ամենուր	ինքնիշխան

Շարքերը կարելի է երկարացնել:

Բառերը գրելուց հետո տեղայնացնել բայ թեմայի վրա. Առաջարկել հետևյալ հարցը. «ինչ է ցույց տալիս բայը»: Աշակերտները կպատասխանեն, որ բայը ցույց է տալիս գործողություն այնուհետև գրատախտակին գրել **ԲԱՅ** բառը և մտազրոհով թվարկել բայեր՝ իջնող, վազել, կերել եմ, սովորող, պատմելիս, կանգնած, երգելու է, կկատարի և այլն:

Աշակերտների առաջարկել գրված բայերը դասակարգել ըստ վերը նշված հատկանիշի՝ կաղյալ կամ անկախ, և հիմնավորել թե ինչու են այդպես մտածում: Հնարավորություն տալ իրար հետ խորհրդակցելու, որպեսզի հնարավորինս ճիշտ պատճառաբանեն: Աշակերտները կառանձնացնեն երկու խումբ. բայեր, որոնք ունեն դեմք, և բայեր, որոնք գուրկ են դեմքի

քերականական կարգից: Հետո առաջարկել, որ համեմատեն նախորդ առաջադրանքի հետ և եզրահանգեն թե այս երկուսից՝ դիմավոր և անդեմ, որն է իր կիրառությամբ համապատասխանում **ԱՆԿԱԽ** բառին: Այնուհետև աշակերտներին առաջարկում եք դնել հավասարման նշան.

Որ երկու բառերի միջև կդնեն այդ նշանը:

### **ԱՆԴԵՄ=ԱՆԿԱԽ**

Աշակերտները փորձում են ձևակերպել սահմանումը, թե որ բայերն են կոչվում դերբայներ և ինչու են կոչվում անկախ դերբայներ: Ուսուցչի ուղղորդմամբ տրվում է սահմանումը. «այն բայերը, որոնց արտահայտած գործողությունը չունի դեմք» կամ «այն բայերը, որոնք անկախ գործածություն ունեն»:

Փորձել աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել **ԱՆԿԱԽ** բառի վրա: Դրա մեկնաբանման համարգրատախտակին գրում եք նախադասություն. «Արշավախումբը որոշեց ճամփա ընկնել լույսը բացվելուց առաջ և անցնելով գետի վրայով, որը գյուղը բաժանում է երկու մասի, մտան անտառ»:  
Համեմատել «որոշեց, բաժանում է, մտան» բայերը «ճամփա ընկնել, բացվելուց, անցնելով» բայերի հետ: Նկատում են, որ առաջին շարքի բայերը ունեն դեմք, հասկանում ենք, թե ով է կատարում գործողությունը, իսկ երկրորդ շարքի բայերը ընդհանուր գործողություն են նշում: առաջին շարքի բայերից «բաժանում է» բայը առանց **Է** օժանդակ բայի չի կարող կիրառվել, այսինքն կախյալ վիճակում է, իսկ երկրորդ շարքի բայերի համար այդ օժանդակ բայի առկայությունը անհրաժեշտություն չէ:

Այս ամենից հետո գրատախտակին գրել դերբայները.

**Անորոշ դերբայ – գրել, կարդալ**

**Ենթակայական դերբայ – գրող, կարդացող**

**Հարակատար դերբայ – գրած, կարդացած**

**Համակատար դերբայ – գրելիս, կարդալիս**

Դասարանական աշխատանքով ամրապնդել թեման : Հանձնարարվում է տրված տեքստից դուրս գրել անդեմ բայերը՝ անվանելով դրանք :

Հանձնարարվում է տնային աշխատանք

Հաջորդ ժամին ուսումնասիրվում են անկախ դերբայները՝ յուրաքանչյուր դերբայի ուսումնասիրման համար հատկացնելով մեկ ժամ , բացի անորոժ դերբայից, որին տրամադրվում է երկու ժամ:

**Առաջին ժամը** տրամադրվում է անորոշ դերբայի ընդհանուր բնութագրմանը և կիրառությանը: Դրա համար նախ տրվում է անորոշ դերբայի մասին ընդհանուր տեղեկություն՝ աշխատանքի կենտրոնում ունենալով աշակերտի ակտիվ մասնակցությունը:

Աշակերտներին բաժանել նախադասություններ և հանձնարարել, որ նրանք գրատախտակին գրեն անորոշ դերբայները:

**Մայրիկը որոշեց համբերությամբ պատասխանել փոքրիկի բոլոր հարցերին:**

**Ծերունին խաղիսափելով մոտեցավ դռանը և ցանկացավ բազել, բայց չկարողացավ:**

**Պաշտից տուն գալով՝ հայրիկն ասաց, որ իր բերած բոլոր սնկերը ուտելու են և կարող են սլախենալ թունավորվելուց:**

Աշակերտները գրատախտակին գրում են պատասխանել բացել չվախենալ բայերը: Հաջորդ քայլը կատարելուց առաջ աշակերտների միջոցով վերհիշում եք գոյականի հոլովման կարգը, նաև նշում եք հոլովումները: Ուսուցիչը հանձնարարում է նորից նայել նախադասությունները և փորձել հասկանալ թե արդյոք չկան բայեր, որ հոլովված են գոյականի նման: Աշակերտները գտնում են խաղիսափելով, գալով, ուտելու բայերը և ասում հոլովնրը՝ գործիական, գործիական, սեռական: Նաև որոշում են որ դրանք պատկանում են ու արտաքին հոլովման:

Հանձնարարվում է հոլովվել գրատախտակին գրված բայերը՝ կարդալ, վազել, ցատկոտել, կարոտել: Աշակերտները կազմում են նախադասություններ և ձևակերպում, թե ինչ հարցերի են պատասխանում բայերը: Աշակերտների մեջ անպայման կլինեն անորոշ դերբայը վաղակատար ձևաբայի հետ շփոթողներ: Այդ շփոթությունը շտկելու համար թելադրվում են նախադասություններ:

Ես **ուտելու** եմ մայրիկի եփած կարկանդակը:

Այդ կարկանդակը հին է, **ուտելու** չէ:

Աշակերտը դասը **պատմել է** անթերի:

Աշակերտը որոշեց ամեն ինչ **պատմել** ճշգրիտ:

Առաջին նախադասության մեջ ընդգծված բառը ստորոգյալ է և ոչ մի պարագայում առանց օժանդակ բայի չի կարող հանդես գալ. աշակերտները եզրահանգում են, որ դա կախյալ բայ է, ինքնուրույն չի կարող հանդես գալ, ուրեմն դերբայ չէ: Ուսուցիչը հավելում է ,որ դրա ինչ լինելը իրենք հետո են ուսումնասիրելու:

Հաջորդ նախադասության ստորոգյալը՝ **ուտելու չէ**, ուսուցչի օգնությամբ կարողանում են փոխարինել ուտելու համար չէ, ուտելու պիտանի չէ և նման կապակցություններով, որոնց միջոցով ըմբռնում են, որ անկախ է և առանց օժանդակ բայի կարող է կիրառվել: Նույն կերպ ուսումնասիրում են հաջորդ երկու նախադասությունները՝ **պատմել է** - միայն ստորոգյալ է

**Պատմել**- լրացում է:

Աշակերտներին հանձնարարում է հետևություն անել, թե այս չորս բայերից որոնք են անորոշ դերբայներ: Աշակերտները անշուշտ ճիշտ կպատասանեն, քանի որ արդեն խոսվել է անկախ դերբայների մասին:

Հետևություն է արվում, որ անորոշ դերբայը կարող է գոյականի նման հոլովվել և պատկանում է **ու** հոլովման, նախադասության մեջ կարող է կատարել այն բոլոր պաշտոնները, որոնք կատարում է գոյականը իր հոլովված ձևերով: Ուսուցիչը ավելացնում է, որ անորոշ դերբայի ներգոյականը և հոգնակի թիվը քիչ են գործածվում: Խրախուսելու համար լավագույն

նախադասություններ կազմող աշակերտներին գնահատել: Այս ամենից հետո աշակերտները ձևակերպում են սահմանումը.

### **Անորոշ դերբայը ցույց է տալիս մի բան անելու կամ լինելու ընդհանուր գաղափարը**

Աշակերտները կազմում են դերբայների ժխտական խոնարհումները.

Գրել – չգրել

Գրելու- չգրելու

Գրելուց – չգրելուց

Գրող- չգրող

Գրած – չգրած

Այս ամենը ամրապնդելու նպատակով կատարել համեմատում գոյականի և դերբայների միջև և կազմել վեճի դիագրամ: Առաջին շրջանակում ներկայացվում են գոյականին բնորոշ հատկանիշները ` առարկա, ութ արտաքին և երկու ներքին հոլովումներ, թվի քերականական կարգ: Երկրորդ շրջանում գրվում են անորոշ դերբայ` թվարկելով գործողություն, դրական և ժխտական խոնարհում: Հատվող մասում գրվում են ընդհանուր քերականական կարգերը` հոլով, հոլովում, նյութական իմաստ արտահայտող բառեր են: Այս ամենից հետո աշակերտները ավելի հստակ են ձևակերպում գոյականի և անորոշ դերբայի ընդհանրությունները և ասում, որ անորոշ դերբայը գոյականի նման հոլովվում է :

Հանձնարարվում է տնային աշխատանք .Գեղարվեստական գրականությունից գտնել անորոշ դերբայի տարբեր կիրառությունների օրինակներ: Հաջորդ դասին սովորածը ամրապնդելուց հետո դիտարկում են անորոշի վերջավորությունները` **ել, ալ** : Աշակերտներին սովորեցնում եք բայի հաջորդ քերականական հատկանիշը ` խոնարհումը: Սա շատ արագ է արվում և անցնում եք հաջորդ քայլին` անորոշ դերբայի կազմության ուսումնասիրությանը:

**Աշակերտներին պիտի սովորեցնել հիմքի կազմությունը: Գրա համար հարկավոր է նախօրոք հանձնարարել, որ կրկնեն վեցերորդ դասարանում անցածը հիմքի և վերջավորության մասին: Այդ մասին նախորդ օրը տնային աշխատանք հանձնարարել: Այժմ, երբ պիտի բացատրվի անորոշի հիմքի կազմությունը, ստուգվում է տնային աշխատանքը և բացատրվում, թե ինչ բան է հիմքը, հետո ուսուցիչն անդրադառնում է բայի հիմքին:**

Ս. Վ. Գյուլբուդադյան Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա. Երևան Լույս ՀՐ 1987 էջ 217-218)

Գրատախտակը բաժանել հինգ մասի և գրել բայեր:

Կարդալ	գտնել	խաղացնել	ցատկոտել	լցվել
երգել	կորչել	հազցնել	կտրատել	ջարդվել

Աշակերտներին հանձնարարել գտնել գրված բառերի արմատները՝ **երգ, կոր, հազ, կտր, գտն**, այնուհետև ընդգծել անորոշի վերջավորությունները և դիտարկել: Աշակերտները կնկատեն, որ առաջին բառի հիմքի և վերջավորության միջև ոչինչ չկա, իսկ հաջորդ չորս բառերի հիմքի և վերջավորությունների միջև կան տառեր կան տառակապակցություններ: Ուսուցիչը ընդամենը մեկնաբանում է, որ առաջին շարքի բայերը պարզ են, իսկ մնացած բայերը՝ ածանցավոր: Հանձնարարվում է շարքերի ներքևից ավելացնել նմանատիպ բառեր: Այնուհետև ուսուցիչը ավելացնում է, որ **ել, ալ** -ից առաջ ընկած մասը բայի հիմքն է, և հարցնում է, թե ըստ կատարված աշխատանքի՝ ինչ հետևություն են անում աշակերտները. բայի հիմքը քանի տեսակի է լինում:

Աշակերտների պատասխարը կլինի, որ՝ պարզ և ածանցավոր: Ուսուցիչը հանձնարարում է ուսումնասիրել, թե բայերի ածանցները բառի որ մասում են գտնվում, և արդյոք աշակերտները տարբերություն նկատեցին սովորական բառերի և բայերի ածանցների դիրքերի միջև: Անշուշտ աշակերտները կնկատեն, որ բայական ածանցները միջաձանցներ են, մինչդեռ մնացած բառերի ածանցները՝ նախաձանցներ և վերջաձանցներ:

Աշակերտներին հանձնարարվում է բայերից հեռացնել **ել, ալ** վերջավորությունները և ներկայացնել բայի հիմքը: Այնուհետև հնչեցնել հարցը.

- Այդ վերջավորությունները, միանալով հիմքին, արդյոք փոխում են բառի իմաստը:

Կհետևի պատասխանը, որ, այո, դրանք միանում են ուրիշ խոսքի մասերին, դրանց դարձնում բայ:

**Աշակերտ-աշակերտել**

- Լույս- լուսանալ
- Նվազ-նվազել

Հարց-կարող ենք ասել, որ **ել, ալ**-ը նույնպես ածանցներ են: Աշակերտները կամ կասեն այո, կամ կդժվարանան, բայց վստահաբար կասեն, որ դրանց օգնությամբ կազմում ենք բայեր

**Այնուհետև ուսուցիչը բացատրում է, որ ել ալ վերջավորությունները և ա, և ձայնավորները կոչվում են խոնահիչներ. ել վերջավորությամբ բայերը կոչվում են և խոնարհման, իսկ ալ վերջավորության բայերը՝ ա խոնարհման բայեր:**

(Ս. Վ. Գյուլբուղաղյան Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա. Երևան Լույս ՀՐ 1987)

Այսքանից հետո կարելի է խոսել բայական ածանցների տեսակների մասին: Այստեղ նույնպես ուսուցիչը պետք է հենվի աշակերտների ներուժի վրա: Նախ խոսում էք **սոսկածանց** բառի կազմության մասին: Աշակերտները բառակազմական վերլուծությամբ կներկայացնեն սոսկ + ածանց՝ բացատրելով բաղադրիչների իմաստը: Գրատախտակին գրել.



Թռ+ել (+չ)

Գտ+ել (+ն)

Մոտ+ալ (+են)

Մեծ + ալ (+ան)

Հանձնարարվում է տեղադրել միջաձանցները և գրել ստացված նոր բառերը ` թռչել, գտնել, մոտենալ, մեծանալ:

Հարց-Այս ածանցները միանալով բային, արդյոք փոխեցին բայի իմաստը: Բնականաբար պատասխանը կլինի՝ ոչ: Հանձնարարել հետևություն անել, թե ինչու են կոչվում ստկածանցներ: Ճիշտ պատասխան ստանալու համար հիշել ածանցների դերը, որ ունեն բառակազմական նշանակություն: Աշակերտները կասեն, որ սովորաբար ածանցները փոխում են բառի իմաստը, բայց ստկածանցները միացան բային ու ոչինչ չփոխեցին, ուստի դրանք սոսկ անուևով են ածանց և բառակազմական արժեք չունեն:

Աշակերտների չորս շարքերից յուրաքանչյուրին հանձնարարել պարզ բայահիմքեր, որոնց պետք է ավելացնեն տրված ածանցները:

<b>Չ</b>	<b>Ն</b>	<b>ԱՆ</b>	<b>ԵՆ</b>
թռել	հագել	մեծ	մոտ
կորել	գտել	գոյ	հագ
դիպել	մտել	լր	վախ
ուռել	ելել	դժվարս	պարծ
հալել	անցել	սաստիկ	
<b>ԿՍՏԱՆԱՆՔ</b>			
թռչել	հագնել	մեծանալ	մոտենալ
կորչել	գտնել	գոյանալ	հագենալ
դիպչելո	մտնելե	լրանալ	վախենալ
ուռչել	լնել	դժվարանալս	պարծենալ
հալչել	անցնել	աստկանալ	
<b>ԱՅԴ ԲԱՅԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏԵՔ ՀՐԱՄԱՆ</b>			
թռիր	հագիր	մեծացիր	մոտեցիր
կորիր	գտիր	գոյացիր	հագեցիր

դիպիրո	մտիր	լրացիր	վախեցիր
ուռիր	ելիր	դժվարացիր	պարծեցիր
հալիր	անցիր	սաստկացիր	

Գրատախտակին գրել մնացած ածանցները՝ իրենց անվանումներով և դրանցով կազմել բայեր:

Բազմապատկական - առ, ոտ, կոտ, կյտ, կռտ, տ

Պատճառական - ացն, եցն, ցն

Կրավորական - վ

Առաջին շարքը գրում է բազմապատկական բայերի օրինակներ, երկրորդ շարքը՝ պատճառական ածանցներով, երրորդ շարքը՝ կրավորական:

Աշխատանքները ստուգելուց հետո աշակերտները մեկնաբանում են, թե ինչ տարբերություններ նկատեցին այս երեք տեսակի ածանցների և սոսկաձանցների միջև: Կպատասխանեն, որ սոսկաձանցները բայի իմաստը չէին փոխում, իսկ մնացածները փոխում են: Բազմապատկական ածանցները բային հաղորդում են գործողության կրկնության իմաստ՝

կտրատել – կտրել կտրել

ցատկոտել- ցատկել ցատկել

խոցոտել- խոցել խոցել

**Պատճառական ածանցները բայերին հաղորդում են պատճառաբանված գործողության իմաստ.**

Խաղալ-խաղացնել- խաղալ տալ

Մոտենա; - մոտեցնել - մոտենալ տալ

Կորել – կորցնել-կորչել տալ

**Կրավորական ածանցը միակն է՝ վ**

Գրել-գրվել

Սիրել-սիրվել

Բովել-բովվել

Թովել-թովվել

Տնային աշխատանքի համար հանձնարարվում է տեքստ,որից պետք է դուրս գրեն սոսկաձանցավոր, պատճառական, կրավորական և բազմապատկական բայերը:

Հաջորդ ժամին ներկայացնել մնացած դերբայները: Աշակերտներին հանձնարարվում է մեկնաբանել, թե ինչ են հասկանում հարակատար, համակատար, ենթակայական բառերը ասելով:

Հարց-Եթե փայտը կոտրում ենք,այն ինչպիսին է դառնում-**կոտրած**  
Եթե դասը սովորել էք-**սովորած**

Եզրակացնում են, որ հարակատար դերբայի արտահայտած գործողությունը ինչ-որ գործողության հետևանք է, որը ավելի շատ վիճակ է արտահայտում:

Աշակերտներին ասել ենթակայական դերբայի վերջավորությունը՝ **ող**: Հանձնարարվում է կազմել տրված բայերի ենթակայականը.

Վազել-վազող

Նստել-նստող

Ասել-ասող

Սովորել-սովորող

Հարց- Այս բայերը ավելի շատ ինչ են հիշեցնում: Հաստատ կհնչի պատասխան, նման են գոյականին և ենթակային:

Հաջորդ դերբայի վերջավորությունը՝ **իս**, որը համակատարն է: Նույն աշխատանքից նաև այս դեպքում

Գրել-գրելիս

Պատմել- պատմելիս

Խոսել-խոսելիս

Աշակերտները նաև կմեկնաբանեն, որ այս բայերը կարծես ժամանակ են ցույց տալիս:

Տնային աշխատանք հանձնարարել դասագրքից և առաջադրանք տալ հաջորդ դասի համար կազմել հետաքրքիր հարցեր՝ նկարների, խաչբառերի, գծապատկերների տեսքով:

Աշակերտները կազմում են բավականին հետաքրքիր հարցեր, որոնք կարող են զարմացնել անգամ ամենահմուտ ուսուցչին: Ուսուցիչը ինքն էլ պետք է ունենա հետաքրքիր հարցեր: Կատարել խմբային աշխատանք: Օրինակ՝ այսպիսի ձևակերպումներով. գրել այնպիսի բայեր, որոնք կարող են հանդես գալ նաև ուրիշ խոսքի մասի պաշտոնով և այնպիսի բառեր որոնք կարելի է շփոթել բայերի հետ: Որպեսզի աշակերտների համար հեշտ լինի, ուսուցիչը նախ ինքն է ուղղում հարց՝ յուրաքանչյուր թիմին առաջադրելով մեկական հարց:

**Հասարակածի կարմիր գույնը հուշում էր, որ վաղը լավ օր է լինելու** - հասարակած բառը իր տեսքով հշեցնում է հարակատար դերբայ, բայց գոյական է:

**Կա վարկած, որ հայերը մաշտոցյան գրերից առաջ ունեցել են գիր** - վարկած բառը նման է հարակատար դերբայի, բայց գոյական է:

Աշխատանքը կատարելու համար տրվում է ժամանակ: Այն կատարելը հեշտ չի լինի և ուսուցիչը կարող է մոտենալ խմբերին և փոքրիկ հուշումներ անել: Հնչել են այսպիսի հարցեր:

**-Իմ ծննդյան օրը գնացել էինք քաղաքից դուրս, և հայրիկս շատ համեղ խորոված պատրաստեց:** Այստեղ կա **խորոված** բառը, որը ոչ թե հարակատար դերբայ է, այլ գոյական: Խումբը հավելում է, որ այդ բառը կարելի է օգտագործել նաև որպես բայ:

**Ես ավելի շատ սիրում եմ խորոված կարտոֆիլ:** Այստեղ **խորոված** բառը հարակատար դերբայ է:

Հաջորդ խումբը ներկայացրեց երկու նախադասություններ և հանձնարարեց այդ երկու նախադասությունների իրար նման բառերի տարբերությունը տալ:

### **Սիրելի՛ս, այսօր դու քեզ հյուրերի ներկայությամբ լավ չպահեցիր:**

### **Երեխային սիրելիս մայրիկը նրան քնքուշ բառեր էր ասում:**

Պատասխանող թիմը հետևություն է անում, որ առաջին նախադասության **սիրելիս** բառը բայ չէ, իսկ երկրորդ նախադասությանը՝ բայ է:

Աշակերտների միտքը ճկուն է և նրանք կարող են ասել մեզ համար անսպասելի նախադասություններ: Ուսուցիչը պետք է աննկատ ուղղորդի նրանց՝ այդ աշխատանքը կատարելով ազնիվ ու անաչառ: Աշակերտները այսպիսի աշխատանքների ժամանակ շատ շուտ են նկատում ուսուցչի կողմից կատարված անզգույշ քայլերը, օրինակ երբ նա խրախուսում է անարժանին: Մա ակտիվ ուսուցման մեթոդ է, որը նշանակում է, որ ուսուցումը կատարվում է գործունեության մեջ: Մեթոդը նպաստում է անձի ձևավորմանը: **Լ. Ս. Վիգոտսկին** ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Այսպիսի մեթոդների ընթացքում ծավալվում են երկխոսություններ աշակերտների կամ ուսուցչի ու աշակերտների միջև, որը զարգացնում է խնդիրները միասին լուծելու ունակությունները: Մա նպաստում է հիշողության զարգացմանը, որովհետև աշակերտները սովորաբար լավ հիշու են այն, ինչ իրենք են ասել և գուցե նաև բացահայտել:

### **Եզրակացություն**

Հետազոտական աշխատանքը կատարելիս հիմք են ունեցել իմ աշխատանքի ընթացքում կատարած դիտարկումները: Ուսումնասիրելով մի շարք մեթոդական, մանկավարժական և մասնագիտական աղբյուրներ՝ եզրահանգել են, որ ամենահավաստի և վստահելի աղբյուրը ուսուցչի հմտությունն է ու փորձը: Հետազոտության մեջ ներկայացրել են մեկ թեմայի ուսուցման շրջանակներում արված իմ դիտարկումները: Իհարկե ինձ համար կարևոր պայման է այն, որ **ՈՒՍՈՒԳՈՒՄԸ պետք է սկսել հեշտից, ծանոթից և անցնել դեպի անծանոթը, բարդը: Նորը միշտ ավելանում է հնի վրա, ըստ որում այն հնի շարունակությունն է, որոշ չափով է նոր և ոչ ամբողջովին, բացարձակ:**

(Ս. Վ. Գյուլբուդադյան Հայոց լեզվի  
դասավանդման մեթոդիկա. Երևան Լույս ՀՐ  
1987)

Ուսուցման ընթացքում ավելի շատ կիրառվել է խմբային աշխատանքի մեթոդը՝ նկատի ունենալով, որ ուսուցումը պետք է կոլեկտիվ բնույթ ունենա: Աշխատել եմ ներկայացնել նաև շերտավորված աշխատանքի պահերը, որովհետև դասարանը երբեք նույն մակարդակի չի լինում, բայց աշխատանքի մեջ պետք է ներգրավվեն բոլորը: Ընտրված աշխատանքները նպաստել են, որ աշակերտների հետ չլինի լարված հաղորդակցում և աշակերտները կարողանան ազատ արտահայտել իրենց մտքերը՝ երբեմն հանդես գալով որպես սովորեցնողներ:

**Օգտագործված գրականության ցանկ**

Ս.Վ.Գյուլբուդադյան Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա 1987

Աբրահամյան Ա.Ա. Հայերենի դերբայները և նրան ձևաբանական նշանակաությունը Ե 1970

Բարանսկի Յու.Կ. Դասի կատարելագործման պրոբլեմները 1981

Շահբազյան Տ. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա 1958

Ասատրյան Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն 2002

Բարսեղյան Հ. Մեյթիխանյան Փ. Հայոց լեզու յոթերորդ դասարան 2011

Ջուհարյան Բայի ուսուցման հիմնական հարցեր 1956

Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր. Հայոց լեզու և գրականություն 2006